ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3701 ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Հեռ.(0287) 2.12.17, (060)747077
Ֆաքս 2.12.02, (060)747077

N 1302
26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թ.

«ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Ծանուցում

Հարգելի Ա.Ավետիսյան.

Ջերմուկի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու)և «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 16.05.2023թ-ին կնքվել է N ՋՀ-ԲՄԱՇՁԲ-23/5 ծածկագրով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի խմելու ջրի ակունքի հիմնանորոգման աշխատանքների կատարման գնման պայմանագիր(այսուհետ՝ Պայմանագիր):Հիշյալ պայմանագրի շրջանակներում «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ն պարտավորվել է կատարել Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի խմելու ջրի ակունքի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), որի ժամկետը սահմանված էր մինչև 07.08.2023թ.-ը ներառյալ:Հաշվի առնելով «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի՝ 31.07.2023թ.-ի գրությունը և N ՋՀ-ԲՄԱՇՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 1 համաձայնագրով աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 06.09.2023թ.-ը:Հիմք ընդունելով ՀՀ կառավարության՝ 28.12.2023թ.-ի N 2340-Ա որոշումը, պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 2 համաձայնագրով աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 01.11.2024թ.-ը:

Նշված ժամանակահատվածներում Ջերմուկի համայնքապետարանի աշխատակիցների կողմից բանավոր կերպով բազմիցս զգուշացվել և տեղյակ է պահվել «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ին՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև կատարված աշխատանքների մեջ բազմաթիվ թերություններ ունենալու և այդ թերությունները ժամանակին շտկելու մասին, ինչպես նաև տեղեկացվել է 27.08.2024թ-ի թիվ 971 ելից գրությամբ:Ջերմուկի համայնքապետարանի կողմից՝ 17.09.2024թ-ի թիվ 1025 ելից գրությամբ «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ին հերթական անգամ տեղեկացվել է աշխատանքների թերությունների, դրանց վերացման, ինչպես նաև աշխատանքներին վերաբերվող քաղաքաշինական փաստաթղթերի ներկայացնելու մասին և տրվել է ողջամիտ ժամկետ մինչև 01.10.2024թ-ը՝ նշված թերությունները վերացնելու և փաստաթղթերը ներկայացնելու համար:Ի պատասխան Ջերմուկի համայնքապետարանի՝ 17.09.2024թ-ի թիվ 1025 ելից գրության՝ 30.09.2024թ-ին «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ից ստացվել է գրություն խնդրանք առ այն, որպեսզի աշխատանքների թերությունների վերացման ողջամիտ ժամկետ սահմանվի 01.11.2024թ-ը, ինչին Ջերմուկի համայնքապետարանի կողմից առարկություն չի եղել:01.11.2024թ-ին «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ից ստացվել է գրություն խնդրանք առ այն, որ պայմանագրով նախատեսված աշխատանքները ամբողջությամբ կատարվել են, վերացվել են հայտնաբերված բոլոր թերությունները, ինչի կապակցությամբ պետք է ձևավորել աշխատանքների արդյունքը ընդունող հանձնաժողով:Օրենքով սահմանված կարգով ձևավորվել է աշխատանքների արդյունքը ընդունող հանձնաժողով, կատարվել է այցելություն աշխատանքների շինարարական հրապարակ, որտեղ պարզվել է աշխատանքների որոշ

բաղադրիչների նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու և նշված թերությունները չշտկելու փաստերը:

Հաշվի առնելով վերոգրյալները և համաձայն Ջերմուկի համայնքապետարանի և «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի միջև՝ 16.05.2023թ-ինկնքվածN·ՋՀ-ԲՄԱՇՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրի 3.1.4 կետի, Ջերմուկի համայնքապետարանը 26.11.2024թ.-ից միակողմանի լուծում է «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի հետ՝ 16.05.2023թ-ինկնքված N ՋՀ-ԲՄԱՇՁԲ-23/5 ծածկագրով պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի, ինչպես նաև N ՋՀ-ԲՄԱՇՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրի 8.11 կետի դրույթները:

«ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով ներկայացվելու են համապատասխան կառույցներին Ջերմուկի համայնքապետարանին փոխանցելու նպատակով, ինչպես նաև կիրառվելու են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերության պահանջները:

Ծանոթություն:Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

Կատ.՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ Սմբատ Պապոյան: